ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՔ-ԳՀԾՁԲ-21/144

ք. Երևան

«2» հուլիսի 2021թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Սիրեկանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի կարիքների համար պատվիրված նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **10** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 256500 (երկու հարյուր հիսունվեց հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրինչհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 20 (քսան) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,19 (զրո ամբողջ զրո տասնինը հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ զրո հինգ հարյուրերորդական)տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսան ապայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման

ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:

8.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Երևանի քաղաքապետարան	Արխիտեկտ ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտի փող. 1	Ք. Գյումրի, Շիրակացի փ. 83շ. բն 40
Կենտրոնական գանձապետարան	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900032313042	Հ/Հ 1930030206282300
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 05547385
Է. Կիրակոսյան ----------	Ն. Սիրեկանյան----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« » հուլիսի 2021թ. կնքված
ԵՔ-ԳՀԾՁԲ-21/144 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/Հ	ԳՄԱ կոդ (CPV)	Ծառայության տեխնիկական բնութագիրը	Չափաբաժնի անվանումը	գինը /ՀՀ դրամ/	քանակը	Կատարման	
						հասցեն	ժամկետը
1	50531140/80	Պատվիրված նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրում: Փորձաքննությունն իրականացվում է և փորձաքննություն իրականացնողի միջև կնքվող պայմանագրի համաձայն՝ ՀՀ օրենսդրության և նորմատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին համապատասխան: Փորձաքննությունն իրականացնելու համար պատվիրատուի կողմից կներկայացվի •Նախագծային փաստաթղթեր (ընդհանուր բացատրագիր, գլխավոր հատակագիծ, ճարտարապետաշինարարական լուծումներ, ինժեներական սարքավորումներ, ցանցեր և համակարգեր, հիմնական շինարարական նյութերի, արտադրանքների կոնստրուկցիաների հավաք ամփոփագրեր), • Նախահաշվային փաստաթղթեր (Ամփոփ, օբյեկտային և լոկալ նախահաշիվներ): Տեխնիկական առաջադրանք Առաջադրանքի վերջնական նպատակն է նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթների փորձաքննության դրական եզրակացության առկայությունը: Փորձաքննության միջոցով ճարտարապետաշինարարական փաստաթղթերով սահմանված նախագծային լուծումների ՀՀ օրենսդրությանն ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին համապատասխանության ապահովում : Փորձաքննության միջոցով աշխատանքային նախագծի ներքո մշակված 1. գծագրական մասի և մասնագրերի, 2.նախագծային և նախահաշվային փաստաթղթերով ամրագրված ծավալների միմյանց համապատասխանության ապահովում: Փորձաքննության միջոցով նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների խախտումներով մշակված քաղաքաշինական փաստաթղթերում նախագծային լուծումներին առնչվող շեղումների վերաբերյալ նախագծային կազմակերպության հետ համատեղ փոփոխությունների, լրացումների, այլընտրանքային լուծումների, լուծման առավել ռացիոնալ տարբերակների քննարկում՝ փորձաքննվող փաստաթղթերի պարտադիր լրամշակման պահանջով: Պատվիրատուի տեխնիկական բնութագրով նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթի համար	Արաբկիր վ/2 պատշգամբների ընթացիկ վերանորոգման նախահաշիվ-ծավալաթերթերի փորձագիտական եզրակացությունների տրամադրում	42000	1	1. Կոմիտասի պող., 3 շենք, 10; 14 բն. 2. Կոմիտասի պոս., 45 շենք, 10; 11; 12 բն. 3. Շիրվանզադե փող., 15/32 շենք, 6 բն. 4. Տիգրանյան փող., 6 շենք, 4/1; 6; 7 բն. 5. Քանաքեռ ՀԷԿ, 7 շենք, 7 բն. 6. Մամիկոնյանց փող., 15 շենք, 24 բն. 7. Տիգրանյան փող., 7 շենք, 38 բն. 8. Տիգրանյան փող., 14 շենք, 4 բն. 9. Հ.Հակոբյան փող., 2 շենք, 24 բն. 10. Կոմիտասի պող., 12 շենք, 49 բն. 11. Վ.Փափազյանի փող., 26 շենք, 73 բն. 12. Բաղրամյան պող., 33ա շենք, 9 բն. 13. Ա.Խաչատրյան փող., 22 շենք, 34 բն. 14. Կոմիտասի պող., 25 շենք, 26 բն. 15. Կիևյան փող., 5 շենք, 99 բն. 16. Քանաքեռ ՀԷԿ, 9 շենք, 12 բն. 17. Կոմիտասի պող., 45/1 շենք, 21 բն. 18. Ա.Խաչատրյան փող., 12 շենք, 101 բն. 19. Կոմիտասի պող., 65 շենք, 48 բն. 20. Ն.Ադոնցի փող., 3 շենք, 4; 7; 12 բն. 21. Ն.Ադոնցի փող., 7 շենք, 2; 4; 11; 12 բն. Ընդհանուր թվով 31 պատշգամբ:	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2021թ. դեկտեմբերի 1-ը ներառյալ

2	50531140/81	փորձաքննության ապահովում, մասնագիտական եզրակացությունների առկայությամբ համալիր փորձաքննության արդյունքներով ամփոփ եզրակացության ներկայացում: Նախագծողի կողմից օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջների ու պայմանների կոպիտ խախտման դեպքում համապատասխան առաջարկությամբ միջնորդագրի ուղղում Պատվիրատուին եզրակացության տրամադրում՝ հետևյալ բովանդակությամբ. Փորձագիտական եզրակացությունը պետք է ներառի՝ 1)նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի ցանկը և դրանց համառոտ բնութագիրը. 2)ելակետային փաստաթղթերին և օբյեկտի նախագծման տեխնիկական պայմաններին նախագծային լուծումների համապատասխանության վերաբերյալ կատարված եզրահանգումները. 3)հիմնական նախագծային լուծումների վերլուծության արդյունքները, համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին, հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները. 4) ընդունված նախագծային լուծումների վերաբերյալ դիտողությունները և առաջարկությունները, նախագծում ճշտումներ ու լրացումներ կատարելու մասին հանձնարարականները, առաջարկվող ճշտումների հիմնավորումները՝ պարտադիր հղում կատարելով այն նորմին, որի խախտումն արձանագրվել է. 5)փորձաքննության ընթացքում աշխատանքային կարգով կատարված հիմնական փոփոխությունները և լրացումները. 6)քաղաքաշինական փաստաթուղթը երաշխավորելու կամ այն լրամշակման վերադարձնելու կամ այն մերժելու մասին որոշման հիմնավորումները: Փորձագիտական մարմնի դիտողություններն ու առաջարկությունները կարող են ներկայացվել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջների ապահովման մասով: Բացի այդ, հետևյալ ձևակերպումները 1.Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան, 2.Նախահաշվով նախատեսված ծավալները համապատասխանում են նախագծային ծավալներին, 3.Նախագիծը երաշխավորվում է դրական եզրակացությամբ՝ ..... հազ.դրամ նախահաշվային արժեքով, 4.Փորձաքննության ներկայացված փաստաթղթերի ցանկը: Փորձագիտական դրական եզրակացությունը չի կարող պարունակել նախագծային լուծումների վերաբերյալ դիտողություններ, առաջարկություններ կամ նախագծում ճշտումներ ու լրացումներ կատարելու մասին հանձնարարականներ: Ամփոփիչ ձևակերպում. 1. «Երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության	Արաբկիր վ/2 խաղադաշտերի ընթացիկ վերանորոգման նախահաշիվ-ծավալաթերթերի փորձագիտական եզրակացությունների տրամադրում	40000	1	1. Քանաքեռ ՀԷԿ, հհ. 8 և 8ա շենքերի բակ 2. Բաղրամյան պող., հ. 79ա շենքի բակ 3. Օրբելի եղբայրների փող., հ. 65ա շենքի բակ 4. Կիևյան փող., հ. 2 շենքի բակ 5. Գյուլբենկյան փող., հ. 24 շենքի բակ 6. Կոմիտասի պող., հ. 48 շենքի բակ 7. Վրացական փող., հհ. 4 և 6 շենքերի բակ 8. Վ.Փափազյան փող., հ. 21/2 շենքի բակ 9. Տոլբուխին փող., հ. 2 շենքի բակ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2021թ. դեկտեմբերի 1-ը ներառյալ
3	50531140/82		Արաբկիր վ/2 մայթերի վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձագիտական եզրակացությունների տրամադրում	48000	1	1. Վ.Վաղարշյան փող., (Ա.Սերոբի փ-ից դեպի Սոսե փող.); 2. Սոսե փող., (Վ.Վաղարշյան փ-ից դեպի Սոսե 1-ին նրբ.); 3. Հյուսիսային ճառագայթի աջ թև; 4. Արղության փող., (Արղության նրբ-ից դեպի 38 շենք); 5. Վ.Համբարձումյան փող., (Վ.Փափազյան փող-ից դեպի Վ.Վաղարշյան փող.); 6. Գ.Սունդուկյան փող., (Վ.Վաղարշյան փող-ից դեպի Գ.Գյուլբենկյան փող-ի հատված); 7. Ա.Խաչատրյան փող., 1-ին նրբ., (Կոմիտասի պող-ից դեպի Ա.Խաչատրյան փող. հատված)	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2021թ. դեկտեմբերի 1-ը ներառյալ
4	50531140/83		Արաբկիր վ/2 մայթերի թեքահարթակների կառուցման տիպային էսքիզի և նախահաշիվ-ծավալաթերթի փորձագիտական եզրակացության տրամադրում	6500	1	Արաբկիր վարչական շրջան	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2021թ. դեկտեմբերի 1-ը ներառյալ
5	50531140/84		Արաբկիր վ/2 հենապատերի վերանորոգման նախագծա-նախահաշվային	120000	1	1. Բաբայան փող. 26-34 հասցեների բակային տարածքում գտնվող հենապատ 2. Դավիթաշենի կամրջի հենապատ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2021թ.

		և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին, կամ 2. «Նախագիծը վերադարձվում է լրամշակման, կամ 3 «Նախագծային փաստաթղթերը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական պահանջներին 4. Եզրակացությունը ներկայացնել 2 օրինակից և էլեկտրոնային տարբերակով;	փաստաթղթերի փորձագիտական եզրակացությունների տրամադրում				դեկտեմբերի 1-ը ներառյալ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900032313042
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
Արխիտեկտ ՍՊԸ
Ք. Գյումրի, Շիրակացի փ. 83շ. բն 40
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930030206282300
ՀՎՀՀ 05547385

Ն. Սիրեկանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
« » հուլիսի 2021թ. կնքված
ԵՔ-ԳՀԾՁԲ-21/144 ծածկագրով պայմանագրի

ՀՀ դրամ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

			ծառայությունների												
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50531140/80	Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի պատշգամբների ընթացիկ վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայություններ							31500	31500	31500	42000	42000	42000	42000
2	50531140/81	Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի խաղադաշտերի ընթացիկ վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայություններ							30000	30000	30000	40000	40000	40000	40000
3	50531140/82	Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի մայթերի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայություններ							36000	36000	36000	48000	48000	48000	48000

4	50531140/83	Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի մայթերի թեքահարթակների կառուցման տիպային էսքիզի և նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայություններ						4870	4870	4870	6500	6500	6500	6500
5	50531140/84	Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի հենապատերի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայություններ						90000	90000	90000	120000	120000	120000	120000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900032313042
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
Արխիտեկտ ՍՊԸ
Ք. Գյումրի, Շիրակացի փ. 83շ. բն 40
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930030206282300
ՀՎՀՀ 05547385

Ն. Սիրեկանյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված3
« » հուլիսի 2021թ. կնքված
ԵՔ-ԳՀՇՁԲ-21/144 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
Գտնվելու վայրը _____	Գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « »20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն ևՊայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
ՊայմանագրիշրջանակներումՊայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցվածծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված3.1
« » հուլիսի 2021թ. կնքված
ԵՔ-ԳՀԾՁԲ-21/144 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է,որ_____-ի(այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող)միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀՀ դրամով, ներբանկային և/կամ Bank Mail համակարգով կատարվող փոխանցումների համար

PAYMENT ORDER. ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ

DATE.ԱՄՍԱԹԻՎ _02/07/21_____

ՓԱՍՏԱԹՂԹԻ ՀԱՄԱՐԸ DOC.NUMBER	000177	ՎՃԱՐՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ VALUE DATE	
50:	ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐԸ ACCOUNT NUMBER	1930030206282300	
	ՎՃԱՐՈՂ ORDERING CUSTOMER	ԱՐԽԻՏԵԿՏ ՍՊԸ ՀՎՀՀ 05547385 Սոցիալական քարտ	
52	ՎՃԱՐՈՂԻ ԲԱՆԿ ORDERING CUSTOMER'S BANK	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	
32:	ԳՈՒՄԱՐԸ (թվերով և/կամ բառերով) AMOUNT	25,650.00 AMD	
	ԱՐԺՈՒՅԹԸ (բառերով կամ կոդով) CURRENCY Ոսկու դեպքում՝ գրամով Grams if gold	Քսանհինգ հազար վեց հարյուր հիսուն դրամ	
57:	ՍՏԱՑՈՂ ԲԱՆԿ ACCOUNT WITH INSTITUTION	ՀՀ ԿԲ գործ.վարչություն /ՀՀ Ֆինանս. նախ.	
59:	ՇԱՀԱՌՈՒՆ BENEFICIARY	Հայտի և պայմանագրի ապահովումը բանկային երաշխիքով կամ կանխիկ փողի ձևով	
	ՇԱՀԱՌՈՒԻ ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐԸ ACCOUNT NUMBER	900008000664	
70	ԳՈՐԾԱՐՔԻ ՆՊԱՏԱԿԸ PAYMENT DETAILS	ԵՔ-ԳՀՇՁԲ-21/144 Ծածկագրով պայմանագրի որակավորման ապահովում	
71A	ԾԱԽՍԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ DETAILS OF CHARGES *		

ACCOUNT HOLDER Seal SIGNATURE

ՀԱՇՎԵՏԵՐ Կ.Տ. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ AUTHORISED PERSON'S SIGNATURE	
ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐԸ (դրույքը և/կամ գումարը) COMMISSION (rate and/or amount)	

** Կիրառելի է արտարժույթով փոխանցումների դեպքում*

ConverseBank	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Ընթացիկ և Խնայողական հաշիվների բացման և վարման կարգ	PR 72-01	
	Հավելված 9 Վճարման հանձնարարագրի օրինակելի ձև	Ամսաթիվ 22.05.17թ.	Խմբագրություն 12	1/ 75

ՀՀ դրամով, ներբանկային և/կամ Bank Mail համակարգով կատարվող փոխանցումների համար

PAYMENT ORDER. ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ

DATE.ԱՄՍԱԹԻՎ _02/07/21___________

ՓԱՍՏԱԹՂԹԻ ՀԱՄԱՐԸ DOC.NUMBER		000178	ՎՃԱՐՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ VALUE DATE	
50:	ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐԸ ACCOUNT NUMBER		1930030206282300	
	ՎՃԱՐՈՂ ORDERING CUSTOMER		ԱՐԽԻՏԵԿՏ ՍՊԸ ՀՎՀՀ 05547385 Սոցիալական քարտ	
52	ՎՃԱՐՈՂԻ ԲԱՆԿ ORDERING CUSTOMER'S BANK		«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	
32:	ԳՈՒՄԱՐԸ (թվերով և/կամ բառերով) AMOUNT		38,475.00 AMD	
	ԱՐԺՈՒՅԹԸ (բառերով կամ կոդով) CURRENCY Ոսկու դեպքում՝ գրամով Grams if gold		Երեսունութ հազար չորս հարյուր յոթանասունհինգ դրամ	
57:	ՍՏԱՑՈՂ ԲԱՆԿ ACCOUNT WITH INSTITUTION		ՀՀ ԿԲ գործ.վարչություն /ՀՀ Ֆինանս. նախ.	
59:	ՇԱՀԱՌՈՒ BENEFICIARY		Գ-նումների որակավորման ապահովում՝ կանխիկ փողի ձևով, ՀՀֆինանսների նախարարություն	
	ՇԱՀԱՌՈՒԻ ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐԸ ACCOUNT NUMBER		900008000698	
70	ԳՈՐԾԱՐՔԻ ՆՊԱՏԱԿԸ PAYMENT DETAILS		ԵՔ-ԳՀԾՁՔ-21/144 ծածկագրով պայմանագրի որակավորման ապահովում	
71A	ԾԱԽՍԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ DETAILS OF CHARGES *			

ACCOUNT HOLDER

ՀԱՇՎԵՏԵՐ

Seal

Կ.Տ.

SIGNATURE

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Converse Bank CJSC
1327
Կատարված է / Implemented
Աննա Anna
Ղազարյան Ghaza...

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ AUTHORISED PERSON'S SIGNATURE	
ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐԸ (դրույքը և/կամ գումարը) COMMISSION (rate and/or amount)	

* Կիրառելի է արտարժույթով փոխանցումների դեպքում